հէլլէն օրէնքներն ու կարգերը բոլորը սահմանուած են միայն իշխանաւոր նախարարներին զօրեղացնելու, սրանց հասոյթները ընդարձակելու եւ հողագործին լիովին ստրկացնելու։ Կասկած չկայ, որ հէլլէնական կուռքերը ատելի էին Հայաստանում, այնպէս, ինչպէս որ արհամարուած էին Իրանում, քանի որ այդ դից քուրմերը ենթարկուում էին Պարթեւներին եւ նախարարներին, օգտուում էին տաճարներին յատուկ կալուածներից եւ զոհաբերութիւններից, պէտք էր, որ պաշտպանէին տիրողների շահերը։

Պարթեւներին եւ Պահլաւներին չէր կարող աշխատաւոր ժողովուրդը յարգել եւ սիրել, քանի որ նրանք միշտ ձգտում էին հէլլէնական կարգերի միջոցով ստրկացնել երկրագործներին եւ սրանց ծառայեցնել իրենց, այն ինչ ժողովրդի հայեացքը միշտ արեւելքի, միշտ Սաւալանի կողմն է եղել եւ անվերջ պահանջել են արիական Զրադաշտական նիստուկաց, քրիստոնէութիւնը ընդունելուց էլ յետոյ։ Չէին կարող պնդել, թէ ժողովուրդը—աշխատաւորութիւնը չէր բողոքում, չէր ապստամբում, չէր մաքառում, քանի որ մեզ յայտնի է, որ նախարարներից մեծագոյն մասը ընկճուած, պարտաւորուած էին պարսկական հրահանգներուն ենթարկուելու, որպէս զի չզրկուին իրենց հասոյթներից։ Զնայելով որ Տայեցի—